



ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

Հնդհանրական եկեղեցու Երկոտասան վարդապետ-ներից և Հարք Եկեղեցույ կոչված մեծավաստակ գրողներից բացի՝ մեր եկեղեցին կատարում է նաև հիշատակը Առաքելական հայր-եր կոչված երեք հայրապետների կամ եպիսկոպոսների, որոնք ապրել և ստեղծագործել են Ա.—Բ դարերում:

Ըստ մեր եկեղեցու, Առաքելական հայր են համարվում ա. Կղեմես Հոռոմայեցին, ա. Իգնատիոս Անտիոքացին և ա. Պողիկարպոս Ջմյուռնիացին:

Կղեմես հայրապետի տոհմը մեր եկեղեցին կատարում է Սիցիլիայի Տոռոմեն քաղաքի Բագարատ եպիսկոպոսի հետ, Հիսնակաց Ա կիրակիի հաջորդ հինգշաբթի²: Իգնատիոս հայրապետի տոհմը կատարվում է Հիսնակաց Դ կիրակիի հաջորդ երկուշաբթի³, իսկ Ջմյուռնիայի Պողիկարպոս հայրապետի տոհմը՝ Հիսնակաց Դ կիրակիի հաջորդ երկուշաբթի օրը⁴:

Մյուս եկեղեցիների համար Առաքելական հայր են համարվում նաև Բառնաբասը (Թուղթ Բառնաբասի) Հերմասը («Հովիտ» Հերմասի) և Պապիասը:

«Առաքելական հայր են կոչվում նաև սակավաթիվ այն եպիսկոպոսները, որոնք վերջին առաքելոց ժամանակ կային և

ապրեցան Երուսաղեմի կործանման և ավերման շրջանին, ի մեջ թագավորության Տիտոսի և Տրայիանոսի»⁵:

Ա. Կղեմես Հոռոմայեցին, ա. Իգնատիոս Անտիոքացին և ա. Պողիկարպոս Ջմյուռնացին համարվում են Ա և Բ դարի սկզբներից առաքյալներից հետո քրիստոնյա առաջին քարոզիչներ և գրողներ, որոնց մատենագրական վաստակը գնահատվում է որպես անմիջական շարունակությունն ու արձագանքը առաքելական քարոզության:

Առաքելական հայրերը այս իմաստով թե՛ անձնական շփում և թե՛ մոտիկ հարաբերություններ են ունեցել առաքյալների և կամ նրանց անմիջական աշակերտների հետ և նրանցից ստացել են անհրաժեշտ ցուցմունքներ և հրահանգներ, իրենց քարոզչական և մատենագրական՝ աշխատանքների համար:

Առաքելական հայրերի մատենագրական վաստակը ըստ բովանդակության և ոճի սերտորեն առնչվում է Նոր Կտակարանի առաքելական, հովվական թղթերի նկարագրի հետ⁶:

Առաքելական հայրերի գրվածքները համարվում են այս իմաստով «միացման օղակներ Հայտնության ժամանակի և Ա.

¹ Տես այս մասին «Էջմիածին», ամսագիր, 1979, № 7, էջ 15—19:

² Օրացոյց, Մայր Աթոռ, 1979, էջ 189:

³ Նույնը, էջ 145:

⁴ Նույնը, էջ 144:

⁵ Մելքիսեթիկ եպիսկոպոս Մուրատյան, Պատմություն քրիստոնեական եկեղեցվո, Գալաց, 1893, էջ 66—67:

⁶ Պողոս և մյուս առաքյալների հովվական թղթերի մասին տես Նոր Կտակարան, Մայր Աթոռ, 1975, էջ 562—587, 617—661:

վանդության շրջանի միջև և միաժամանակ շատ կարևոր վկայություններ՝ քրիստոնեական հավատքի»⁷:

Առաքելական հայրերը ապրել և գործել են Հռոմեական կայսրության տարբեր ժամանակներում՝ Անտիոքում, Փոքր Ասիայում, Հռոմում, ծանր և դառն հալածանքների պայմաններում, ենթարկվել են անլուր տառապանքների և հալածանքների և իրենց կյանքը կնքել մահատակությամբ Դոմեթիանոս (81—96), Մարկոս Ավրելիոս (161—180), Սեպտիմոս Սևերոս (193—211) կայսրերի օրով, անմահանք և անձնուրաց համարձակությամբ՝ հանուն իրենց հավատքի սրբության, կրոնական համոզմունքների և խղճի ազատության:

Դարերի ընթացքում «հալածանքը անբաժանելի մասը պիտի կազմեր քրիստոնեական կյանքին»:

Առաքելական հայրերի մատենագրական վաստակը ներկայացնում է «գաղափարների միակցված մի աշխարհ, որը տալիս է մեզ դարի իրադրության մեջ քրիստոնեական հավատքի մի պատկերը»⁸, որը լույս է ափոում մահ «առաջին երկու դարերու քրիստոնեական սովորությանց, կենցաղի ու մանավանդ աստվածաբանության ու եկեղեցական պատմության վրա»⁹:

Առաքելական հայրերի գրվածքների տիպիկ նկարագիրը կապվում է մահ դրանց վախճանաբանական բնույթի մեջ: Նրանց բոլոր գրվածքներում Քրիստոսի երկրորդ գալուստի համարվում է մոտալուտ: Այդ գրվածքների մեջ Քրիստոսը ներկայացվում է որպես այս երկրի վրա առաքյալների, նրանց աշակերտների և քրիստոնեական համայնքների հիշողության մեջ դեռ կենդանի, ներշնչող ու խորունկ միասնական մի ապրում: Քրիստոսը նկարագրվում է այս աշխարհից մեկնած, բայց սրտագին սպասված Փրկիչը, որը միշտ հարաբերության մեջ է իր հավատացյալների հետ:

Առաքելական հայրերը իրենց գլխավոր գրվածքներում նպատակ չեն ունեցել գիտական բացատրություններ և կամ դավանաբանական սահմանումներ բանաձևել, իրենց հավատքի մասին, թեև նրանց քրիստոնաբանական վարդապետությունը մի մասն է, հստակ ու պարզ, առաքելական

դավանության: Քրիստոսը առաքելական հայրերի համար Աստծու նախագո, հավիտենական Որդին է, որը և համագործակցել է Հորը հետ Տիեզերքի արարչագործության մեջ¹¹:

Ա. ԿՂԵՄԵՍ ՀՌՈՄԱՅԵՑԻ
(92—101)

Առաքելական հայրերի մեջ, 92—101 թվականներին, առաջինը Հռոմի ա. Կղեմես եպիսկոպոսն է: Նա համարվում է ա. Պետրոսից հետո Հռոմի երրորդ եպիսկոպոսը, ըստ ս. Իրենեոսի վկայության, որը անձամբ ծանոթ է եղել մահ թե՛ Պետրոս և թե՛ Պողոս առաքյալներին¹²:

Հայտնի չէ, թե Կղեմեսը ե՞րբ է անցել իր իշխանության գլուխը և որքան ժամանակ ղեկավարել է Հռոմի եկեղեցին: Ումանք Կղեմեսի իշխանության տարին համարում են 92—101 թվականները: Ըստ Եվսեբիոս Կեսարացու վկայության¹³, Կղեմեսը իշխանության գլուխ է անցել Դոմեթիանոս կայսրի գահակալության (81—96) 11-րդ տարում և մահատակվել է Տրայանոսի (98—117) իշխանության երրորդ տարում:

Աֆրիկյան եկեղեցու նշանավոր հայր Տերտուլիանոսը (115-ին ծնած) վկայում է, որ Կղեմեսը իր եպիսկոպոսական ձեռնադրությունը ստացել է անձամբ Պետրոս առաքյալից:

Ծանոթ չէ Կղեմեսի նախկին կյանքը: Եվսեբիոս Կեսարացին և Որիգենը Կղեմեսին նույնացնում են Պողոս առաքյալի Փիլիպեցիներին ուղղած թղթում¹⁴ հիշված «լծակից-մոկրիմ» Կղեմեսի հետ, որը ուրիշների Հին Ավետարանի քարոզության համար «պաշարեցին», այսինքն չարչարվեցին ու տքնեցին: Ուրիշներ չեն ընդունում այս նույնացումը: Պողոս առաքյալի հիշած Կղեմեսը և Կղեմես Հռոմայեցին տարբեր անձնավորություններ են¹⁵:

Կարծվում է, որ Կղեմեսը եղել է Ֆլավիանոս կայսրի ընտանիքից և նույնն է Տիտոս Ֆլավիանոս Կղեմես կոնստանտինոսի հետ, որը մահատակվել է 96—97 թվականներին, քրիստոնյա դառնալուց հետո: Այս կարծիքը ևս ընդունելի չէ¹⁶:

¹¹ Quasten, *նույնը*, էջ 40—41:

¹² Իրենեոս, *Ընդդեմ հերձուհուրաց*, Գ գլուխ Դ: Տես նաև Quasten, *նույնը*, էջ 42:

¹³ Եվսեբիոս Կեսարացի, *Պատմություն եկեղեցույ լեղեղալ յատուրոյն ի Հայ, ի Հինգերորդ դարու, Վեներիկ, 1877, Գ, էջ 15, 34, Quasten, նույնը, էջ 42:*

¹⁴ Նոր Կտակարան, *նույնը*, գլուխ Դ 3, էջ 538:

¹⁵ Quasten, *նույնը*, էջ 43: *Encyclopedia americana*, vol. 7, էջ 46:

¹⁶ *Encyclopedia*, *նույնը* էջ 46:

⁷ Johannes Quasten, *patrology I* հատոր, 1966, էջ 40:

⁸ Ծնորճք արքեպիսկոպոս Գալուստյան, Համաքրիստոնեական սուրբեր, Իսթանբուլ, 1978, էջ 13—28:

⁹ Quasten, *նույնը*, էջ 10:

¹⁰ Ծնորճք արքեպիսկոպոս Գալուստյան—*նույնը*, էջ 33:

Մեր վարքագրական աղբյուրները վկայում են, որ Կղեմեսը մի անգամ վտանգավոր մի նավաբեկությունից ազատվելուց հետո, Հռոմում հանդիպում է Պետրոս առաքյալին և դարձի գալով նրանից ստանում է եպիսկոպոսական ձեռնադրություն և դառնում նոր կրոնի համոզված և կորովի քարոզիչը Հռոմում: Այնուհետև Կղեմեսը քրիստոնեության թշնամի Դոմեոսիանոս հալածիչ կայսրի օրով ձերբակալվում է: Կայսերական ատյանի առաջ նա քաջության քաջությամբ պաշտպանում է իր նոր կրոնը, խոստովանում է Քրիստոսի աստվածությունը և ենթարկվում ծանր խոշտանգումների ու տանջանքների: Կղեմեսը իր կյանքը կնքում է հակառակորդների կողմից «նավի խարխալը վզին ամրացված ծովամույկ մահվամբ», 98 կամ 101 թվականներին, երբ աքսորվել էր Խերսոն քաղաքը, Սև ծովի ափին¹⁷:

Ս. Կղեմեսի մատենագրական վաստակը

Կղեմես Հռոմայեցուց մեզ հասել է միայն մի աշխատություն, որը կոչվում է **Թուղթ առ Կորնթացիս**, թեև ըստ մեր Յալսմաւորք-ի նա խորապես ծանոթ է եղել «հելլենական դպրության»:

Կղեմեսի սույն թուղթը համարվում է ետառաքելական շրջանի ամենակարևոր պատմական փաստաթուղթը, քրիստոնեական գրականության հնագույն մեկ մասունքը¹⁸:

Առաքելական հայրերի մատենագրական վաստակը հատկանշվում է «գրական պարզությամբ, կրոնական անկեղծ համոզմունքներով, մտածման և արտահայտության անկախությամբ»¹⁹:

Նրանց մատենագրական վաստակը չի մտել Նոր Կտակարանի կանոնի մեջ: Առաքելական կոչված հայրերը ապրել և ստեղծագործել են Ա դարի վերջերին և մինչև Բ դարի կեսերը, և նրանց գրվածքները սերտ առնչություն են ունեցել Նոր Կտակարանի գրվածքների ավետարանական և առաքելական ուսուցման և պատգամների հետ:

Առաքելական հայրերը գործեցին և գրեցին եկեղեցու ծոցում բորբոքված հերետիկոսական, աղանդավորական շարժման բուռն տարիներին և պետական հալածանքների ամենածանր շրջանին:

Քրիստոնեական եկեղեցին ծանր ու վտանգավոր փորձությունների բովից էր անցնում Ա և Բ դարերում: Հալածանքներն

ու եկեղեցու ծոցում բորբոքված հերետիկոսական, աղանդավորական շարժումները փորձում էին ջլատել եկեղեցու ներքին կյանքը: Բայց եկեղեցին անում էր, ամրապնդում հոգեպես, վարչականորեն իր դիրքն ու առաքելությունը կայսրության բոլոր գավառներում: Այս մասին կա Բյուզանդիայի կուսակալ-հյուպատոս հեթանոս մատենագրի՝ Պիմիոս Կրտսերի վկայությունը, գրված Հռոմ, Տրալանոս կայսրին (98—117):

«Քրիստոնեությունը,—գրում է նա կայսրին,—մեծ հառաջադիմություն գործած է Փոքր Ասիայի մեջ և քաղաքներից տարածվել է գյուղերի մեջ: Լքված են կուրքերի մեհյանները: Դադրել են կուրքերի մատուցվելիք զոհերն ու բազում տեղեր ընդհատվել՝ հին հանդիսություններն»²⁰:

Հալածանքներն ու հերետիկոսների ոտնձգություններն ու խառնակությունները շատ ծանր ու խիստ էին մանավանդ Փոքր Ասիայում, ապա Հունաստանում, Հռոմում, Գալլիայում (Հարավային Ֆրանսիա), Հյուսիսային Աֆրիկայում:

Ահա Կղեմես Հռոմայեցին այսպիսի ծանր հանգամանքների մեջ ապրում և ըստեղծագործում էր:

Հռոմի քրիստոնեական «համայնքի կազմակերպության մասին մենք տեղեկություն ունենք, նույնիսկ Կղեմեսի առ Կորնթացիս գրած թղթից»²¹:

Կորնթոսի եկեղեցին հիմնեց Պողոս առաքյալը, հաղթահարելով բազում դժվարություններ, վշտով և դառնությամբ ակամատես եղավ եկեղեցու ծոցում «կորնթացիների գոռոզամտության» պատճառով սկիզբ առած բաժանումներին», «բարոյական անկարգություններին», և խստությամբ ու առաքելական հեղինակությամբ կոչ արեց «միության և կարգապահության», «կարգ ու կանոնի, պաշտամունքի և եկեղեցու մեջ»²²:

Պողոսի առաքելական հեղինակության առաջ կարգն ու կանոնը վերահաստատվում են Կորնթոսի եկեղեցու ծոցում, և Հեթանոսաց առաքյալը «խնդությունն է ունենում» տեսնելու կորնթացիների ճշմարիտ զղջումը²³:

Սակայն Պողոս առաքյալի Կորնթոսից մեկնումից անմիջապես հետո, «սուտ ա-

²⁰ Մեղիսեսի եպիսկոպոս Մուրատյան, նույնը, էջ 62—63:

²¹ Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, Ընդհանուր եկեղեցական պատմություն, առաջին հատոր, Հին եկեղեցին, ս. Էջմիածին, 1908, էջ 51:

²² Տես այս մասին Նոր Կտակարան, նույնը, Պողոս առաքյալի առաջին թուղթը կորնթացիներին, էջ 447—481:

¹⁷ Նույնը, Տես նաև Acts of martyrs աշխատությունը, գրված IV—V դդ.:

¹⁸ Quasten, նույնը, էջ 43:

¹⁹ Encyclopedia vol. 2, էջ 108:

ռաքյալների» և «նենգավոր մշակների» կողմից բորբոքվում է վեճը Կորնթոսի եկեղեցու ծոցում: Հակառակորդները եկեղեցում իրենց պաշտոններից հեռացնում են մի շարք երեցներին և գրգռում են համայնքը չհնազանդվելու եկեղեցական իշխանության: Միայն մի խումբ հավատացյալներ հավատարիմ են մնում եկեղեցու օրինավոր իշխանության: Կորնթոսի եկեղեցում բորբոքված տարակարծությունների մասին լսվում է Հռոմի քրիստոնեական համայնքի ծոցում: Այդ օրերին Կորնթոսը համարվում էր հոռոմեական գաղութ, ուր ապրում էին մեծ թվով նաև հռոմայեցի քրիստոնյաներ:

Ահա այս առթիվ Հռոմի համայնքը որոշում է միջամտել Կորնթոսի եկեղեցու ներքին գործերին: Գրվում է պաշտոնական մի թուղթ Հռոմի եկեղեցու անունից առ Կորնթացիս: Այդ թուղթը գրում է Կղեմես Հռոմի եպիսկոպոսը, շեշտելով, որ Կորնթոսի եկեղեցում հաստատված կարգերը առաքելական են, առաքյալների կողմից և ամբողջ համայնքի համաձայնությամբ հաստատված են եկեղեցու ղեկավար եպիսկոպոսներն և երեցները, որով հակառաքելական է եկեղեցու պաշտոնյաներին զրկել իրենց պաշտոններից, առանց նույնիսկ նրանց հանցանքների ստուգման: Կղեմեսը Հռոմի քրիստոնեական համայնքը ներկայացնելով որպես կարգ ու կանոնի վրա հաստատված եկեղեցի, կորնթացիներին գրում է. «Ո՛հ, ինչո՞ւ քաժանումներ կան ձեր մեջ: Ո՞չ ապաքեն մենք ունենք մի և նույն Աստվածը, և նույն Քրիստոսը, մի և նույն սուրբ Հոգին, որի շնորհները տարածվել են ձեր սրտերում, և ունենք մի և նույն կոշտը ի Տեր: Ինչո՞ւ ենք պատահում Քրիստոսի մարմինը: Միթե՞ այսքան անմիտ ենք մոռանալու համար, որ միմյանց անդամներ ենք...: Այժմ մտածեցեք, թե որո՞նք են նսեմացնում ձեր եղբայրական սերը: Ամոթ է, սիրելիք, մեծ ամոթ, որ Կորնթոսի եկեղեցին այսպես վարվի... Վերացնենք մեջտեղից իսկական գաղթակցությունը: Ընկենք Հիսուսի ոտքերին և արցունքներով խնդրենք նրանից, որ ների մեզ և հաստատի ի փառս իր և իր սուրբ եկեղեցուն, մեր մեջ եղբայրական սերը»²⁴:

Ըստ մասնագետների վկայության, Կորնթոսի եկեղեցում վեճը բորբոքվում էր քաղաքի բնիկ քրիստոնյաների և Հռոմի

քաղաքացիների միջև, որոնք ականատես լինելով այդ անկարգություններին, դիմում են Հռոմի համայնքին միջամտելու եղբայրաբար և հարթելու տարակարծությունները:

Կղեմեսի թուղթը բաղկանում է երկու մասերից. ներածություն (1—3 գլուխները), ապա բուն թուղթը 4—36 էջերի մեջ, և այնուհետև Բ մասը 37—61 գլուխները, և վերջում եզրակացություն, 62—65 խլուխների մեջ:

Կղեմեսի թղթի ներածական մասում խոսվում է վեճերից առաջ Կորնթոսի քրիստոնեական համայնքի ստեղծման ու ծաղկման մասին Պողոս առաքյալի քարոզության հիման վրա, համայնքի անդամների միջև տիրող եղբայրական սիրտ, համերաշխության և կրոնական նախաձեռնանքության մասին:

Թղթի Ա մասում Կղեմեսը վշտով ու վրդովմունքով, Պողոս առաքյալի ոգով և օրինակով ներկայացնում է երբեմնի այդ համերաշխ համայնքի ծոցում առաջ եկած անկարգությունները, բարոյական ապշաբեկումները, առաքելահաստատ կարգ ու կանոնի խանգարումները, միմյանց հանդեպ բորբոքված նախանձն ու ստեղծությունները, և կոչ է անում հանդուրժողության, եղբայրասիրության, ապաշխարության, խոնարհության և խաղաղության:

Կղեմեսը, ըստ Իրենեոսի վկայության, «կենդանի արձագանքը եղավ առաքելական քարոզության», և հորդորում էր Կորնթոսի խռովարարներին զղջալ և դառնալ իրենց մոլորություններից, հետևել Քրիստոսի հեզության և քաղցրության, որի արյունով էլ իրենք փրկվեցին դատապարտությունից:

Կղեմեսի առ կորնթացիս թուղթը եղբայրական կոչի, քրիստոնեական սիրտ, համերաշխության բնույթ ունի: Այդ թուղթը ընթերցվում էր ըստ եվսեբիոսի վկայության²⁵, Կորնթոսի եկեղեցում, պաշտամունքի ժամանակ, մինչև 170 թվականը:

Կղեմեսը իբր կարգապահության օրինակ, կորնթացիներին հիշեցնում է հոռոմեական բանակի երկաթե կարգապահությունը, որը երաշխիքն է կարգ ու կանոնի, հառաչադիմության և հաղթանակի, պահպանում է կարգը անկարգության մեջ, ինչպիսին էր նաև նվիրապետական իշխանությունը Հին Կտակարանի մեջ:

Քրիստոս էլ առաքյալներ ընտրեց, որոնք իրենց հերթին եպիսկոպոսներ, երեցներ և արկավազներ ձեռնադրեցին եկեղեցու ղեկավարության համար:

Եկեղեցու կյանքում անկարգության

²³ Տես այս մասին Պողոս առաքյալի երկրորդ թուղթը կորնթացիներին, նույնը, էջ 482—504:

²⁴ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատյան, նույնը, էջ 68—69:

²⁵ Եվսեբիոս Կեսարացի, նույնը, Դ, էջ 23:

տեղ պետք է թագավորի խաղաղությունը, թշնամության, հակառակության տեղ՝ քրիստոնեական սերն ու գութը: Անկարգներն ու ըմբոստները պետք է ենթարկվեն եպիսկոպոսական իշխանության, եկեղեցական Ավանդության, կարգապահության և ապաշխարության:

Կղեմեսի թուղթը համարվում է նաև Ա. դարու եկեղեցական պատմության, դավանաբանության, եկեղեցական իրավունքի, ծիսապաշտության թանկագին և կարևոր մի փաստաթուղթ²⁶:

Եկեղեցական պատմության մեջ հիշվում են նաև կեղծ կղեմեսյան գրվածքներ և այլ թղթեր²⁷:

Կղեմեսին «կվերագրվին բազմաթիվ գործեր, բայց իրականում այն է որ գրած է միայն առ կորնթացիս թուղթ մը: Առաքելոց ժամանակակցի և գործակցի իր հանգամանքը այնքան խոր տպավորած է իր անունը հավատացյալներու սրտին մեջ, որ նույնիսկ հետ մահու հրաշագործություններ վերագրված են իրեն... Կղեմեսին կվերագրվին Հռոմի նորակազմ եկեղեցիին մեջ վարչական և կանոնական տնօրինություններ, ինչպես նաև արդյունավոր աշխատություններ քրիստոնեության դարձնելու համար հոգովմայեցիներեն և հույներեն շատեր»²⁸:

Ըստ վարքագրության, Կղեմեսը համարվում է «գրող հրամանադրության կանոնաց արթոց առաքելոց»: Այս խոսքը ակնարկություն է ընդհանրական եկեղեցու կանոնադրության մեջ «կարևոր տեղ գրավող 85 կանոններու խումբի մը, որ թեև կրհիշվի որպես «Բ. Առաքելական կանոններ» և որոնք ծանոթ են սակայն **Կանոնք Կղեմեսյան** անունով, և որ մաս կկազմեն նաև Հայց. եկեղեցու կանոնագիրքին»²⁹:

«Ոչ մի հետքի հանդիպեցանք որ Կղեմեսի գործերը, առնվազն առ կորնթացիս թուղթը, հայերենի թարգմանված ըլլա»³⁰:

Այնուհանդերձ, Երևանի ա. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց ցուցակում³¹

Կղեմեսի գործերից, ոչ հարազատ, հայերեն թարգմանված են համարվում հետևյալները. Կղեմեսի «Վասն հերձուածողաց», ճառք, քարոզք, վարք Կղեմես, Վկայութիւն վասն Քրիստոսի³²:

ԻԳՆԱՏԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ.
ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ
(98—117)

Առաքելական հայրեր կոչված հայրապետների մեջ, ըստ ժամանակագրական կարգի, երկրորդը հանդիսանում է Անտիոքի ա. Իգնատիոս եպիսկոպոսը, որը ծանոթ է եկեղեցական պատմության մեջ նաև **Աստուածազգեսաց** կոչումով:

Իգնատիոսը Անտիոքի Աթոռի երկրորդ եպիսկոպոսն է եղել Պետրոս առաքյալից հետո 98—117 թվականներին, հաջորդելով Եվստիոս եպիսկոպոսին: Նա աշակերտել է Եփեսոսում, Հովհաննես Ավետարանչին, Զմյուռնիայի Պողիկարպոս եպիսկոպոսի հետ:

Ըստ ավանդության, Իգնատիոսը այն երջանիկ մահունցն է եղել, որ Հիսուս իբր օրինակ խոնարհության, Կախառնալովում «վերցնելով» կանգնեցրեց իր աշակերտների մեջ և նրան իր **գիրկն առնելով** նրանց ասաց. «Ով մի անգամ այսպիսի մահունցներից մեկին ընդունում է իմ անունով, ինձ է ընդունում, և ով որ ինձ է ընդունում, ոչ թե ինձ է ընդունում, այլ նրա՛ն որ ինձ ուղարկեց»³³:

Սույն ավանդությունը եկեղեցու հայրերը մեկնում են «հոգևոր իմաստով», այսինքն Իգնատիոսը իր ողջ կյանքում «իրավամբ իր վրա «հագած» էր Քրիստոսը, ինչպես կատարվի Պողոս առաքյալը. «Դուք բոլորդ որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք (Զգեսարուք զՏէր Յիսուս Քրիստոս)»³⁴:

Իգնատիոս հայրապետի մասին կենսագրական սակավաթիվ տեղեկություններ ենք քաղում Փոքր Ասիայի և Հռոմի եկեղեցիներից ուղղած նրա յոթ նշանավոր թղթերից, որոնք Ե դարում թարգմանվել են նաև հայերենի:

²⁶ Quasten, Գույնը, էջ 44—49:

²⁷ Նույնը, էջ 53—55:

²⁸ Թորգոմ պատրիարք Գուշակյան, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 125—126:

²⁹ Ծնորդք արքեպիսկոպոս Գալուստյան, Գույնը էջ 33, և Կանոնագիրք հայոց, Ա, աշխատադրության վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 87—100: Տես նաև Մատենադարան հայկական թարգմանությունաց նախնեաց, Վեներիկ, 1889, էջ 491—494:

³⁰ Ծնորդք արքեպիսկոպոս Գալուստյան, Գույնը, էջ 38:

³¹ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ա, հատոր, Երևան, 1965:

³² Նույնը, Ոսկեբերան, Պրոկ, Կյուրեղ Աղեքսանդրացի, Կղեմես, ձեռագրերի համար 774, 2106, 2131, 2268, 3198: Կղեմեսի կյանքի և մատենագրական վաստակի մասին տես նաև Encyclopedia, Գույնը II հատոր, էջ 108, VI հատոր, էջ 30, XXI հատոր, էջ 252:

³³ Նոր Կտակարան, Մարկ. Թ 35—36, էջ 122:

³⁴ Նոր Կտակարան, Գույնը, Գաղատ. Գ. 27, էջ 512, Հռովմ. ԺԳ 14: Տես նաև Ծնորդք արքեպիսկոպոս Գալուստյան, Գույնը, էջ 34:



Իզմատիոսի կյանքի ամենակարևոր դրվագն է համարվում նրա շղթայակապ տարվելը Անտիոքից մինչև Հռոմ, Դոմեստիանոս կայսրի հալածանքների ժամանակ, ինչպես այն նկարագրվել է իր ժամանակակից մի աշակերտի կամ ընկերակցի կողմից: Այդ գրությունը եկեղեցական մատենագրության մեջ կոչվում է **Մարտիրոսություն Իզմատիոսի անունով**:

Տրաջանոս կայսրը ինչպիսիք արևելք իր ծանոթ արշավանքի առիթով գտնվում էր Անտիոքում: Կայսրը լսելով որ կայսերական հալածանքների ժամանակ Անտիոքում և Փոքր Ասիայում Իզմատիոսը անվախորեն քաջալերում էր հավատացյալներին ընդդիմանալ կայսերական անիրավ հրամաններին և չտկարանալ հավատքի մեջ, հրամայում է իր ներկայությամբ հանել ըմբոստ եպիսկոպոսին, որը եղել էր անաստողը կայսերական իր հրովարտականքին, թելադրելով քրիստոնեական համայնքներին, որ չզոհեն կոտորելին և արհամարհեն հեթանոս պետական աստվածների պաշտամունքը:

Ամբարիշտ կայսրի ներկայությամբ Իզմատիոսը պաշտպանում է քրիստոնեական կրոնի ճշմարտությունն ու գերազանցությունը և հերքում է հեթանոսության ունայնությունն ու կեղծիքը: Հիանալի պերճախոսությամբ և համարձակությամբ ասված Իզմատիոսի հայտարարությունը կատաղեցնում է կայսրին և տեղվույն վրա հրամայում է զինվորական խիստ և դաժան հսկողության ներքո Իզմատիոսին շղթայակապ ուղարկել Հռոմ՝ կրկեսի գազանների առաջ նետվելու համար:

Անտիոքից Հռոմ Իզմատիոսի ճանապարհորդությունը որպես մահապարտի եղել է ծանր և տաժանակիր: Այս առթիվ նա Հռոմի քրիստոնեական համայնքին գրած իր ամսակյում վկայում է. «Սիրիայից մինչև Հռոմ, իմ ճանապարհորդության ողջ ընթացքում, պայքարում էի վայրի գազաններից ընկերակցող տասը զինվորների դեմ... Գիշեր ու ցերեկ կապված մնացի տասը ընձառյուծների մեջ, որոնք ավելի էին կատաղում իրենց հանդեպ ցույց տրված ազնիվ վերաբերմունքի համար»:

Իզմատիոսի ճանապարհորդությունը, սակայն, հակառակ այդ ծանր պայմանների, հանդիսանում է հաղթանակի և փառքի մի երթ: Նրա ձերբակալությունն ու շղթայակապ Հռոմ տարվելը հուզումով և զայրությամբ է լսվում Փոքր Ասիայի քրիստոնեական ողջ համայնքների և եպիսկոպոսների կողմից: Ամեն կողմից հավաք տացյալների բազմություններ և պատգամավորներ գալիս են Իզմատիոսին դիմա-

վորելու մեծ սիրով և հարգանքներով: Չափազանց հուզիչ և պատմական է լինում Զմյուռնիայում Իզմատիոսի և նրա դասընկեր քաղաքի երիտասարդ Պողիկարպոս եպիսկոպոսի հանդիպումը: Իզմատիոսը Զմյուռնիայից յոթ ամսակներ է գրում Փոքր Ասիայի եկեղեցիներին, որոնցում նա ջերմ ու սրտագին շնորհակալություն է հայտնում այդ և այլ քաղաքների քրիստոնյա համայնքներին, որոնք եկել էին իրեն ողջունելու, խրատում է նրանց անվերապահորեն հնազանդվել իրենց եպիսկոպոսներին, պայքարել հերետիկոսների դեմ և չվախենալ պետական հալածանքներից, որովհետև աշխարհում չկա մի ուժ, որը կարողանա տկարացնել և կործանել ճշմարտության վրա հիմնված քրիստոնեական եկեղեցին:

Զմյուռնիայից Իզմատիոսը նամակ է գրում նաև Հռոմի համայնքին, թելադրելով չմիջամտել իր ձերբակալության և չքարեխոսել փոխելու կայսերական հրամանը, խնայելու համար իր կյանքին: «Վախենում եմ,—գրում է նա,—որ ձեր միջամտությունը ինձ վնասի: Հազիվ թե բարեպատեմ առիթը ներկայացել է ինձ զԱստված տեսնելու և նրան ծառանգելու. թողեք ինձ, որ դառնամ նրա գազանների, որպեսզի Աստված լինի իմ ծառանգությունը, իմ բաժինը»: Վերոհիշյալ նամակը պերճախոս վկայությունն է Իզմատիոսի անասան հավատքի, նրա կորույթի ոգու, որը այրվում է կրոնական, ճշմարիտ խանդավառությամբ և պատրաստ է նահատակվելու Քրիստոսի սիրույն և նրա սուրբ եկեղեցու հաստատության և պայծառության համար:

Հռոմի քրիստոնեական համայնքին գրած իր ամսակյում հաստատում էր Իզմատիոսը.

«Ես Աստուծո ցորեանն եմ, պետք է աղացվեմ գազանների ժանիքներից: Թող ինձ փշրեն, աղան, որ մաքուր հաց լինեմ Աստուծուն... Ես ուրախությամբ կկրեմ ամեն տանջանք, միայն թե վախելեմ Հիսուս Քրիստոսին և հրճվեմ ու քերկրիմ նրանով»:

Իզմատիոսի այս բռուն ցանկության մասին է վկայում մեր սրբազան շարակաճազիրը՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, (1019—1058) նրա հիշատակին գրած իր Մանկունք՝ «Որ հրափրեցեր զառաջագոյն ընտրեալսն» ԴԶ շարականում.

«Որ զբաժակն անմահութեան սիրոյ քո արքեալ երանելին Իզմատիոս, որպէս ցորեան աստուածային, գազանաց մանրեալ ժանեօք հաց սուրբ գտաւ Աստուծոյ»³⁵:

³⁵ Զանքաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 422:

Իգնատիոսը վերջապես ծովու և ցամաքի երկար ճանապարհորդությունից հետո հասնում է Հոռոմ, ուր նա արիությամբ, համուն իր քրիստոնեական սուրբ հավատքի, նահատակվում է՝ մեռնելով Կոլոսիումի ամֆիթատրոն, ուր բզկտվում է առյուծներից:

Իգնատիոսը նահատակվում է 117 թվականին, Տրայանոսի օրով: Նրա գլուխն ու մատուցները տարվում են Անտիոք:

Հայ եկեղեցին Իգնատիոսի տոնը կատարում է Հիսնակաց Դ կիրակիի հաջորդ երկուշաբթի օրը³⁶:

Սուրբ Իգնատիոս եպիսկոպոսի մատենագրական վաստակը և դրա հայերեն թարգմանություններն ու հրատարակությունները

Լիոն քաղաքի սուրբ Իրենեոս եպիսկոպոսը (125?—202) և Եվսեբիոս Կեսարացի պատմիչը (Գ դար) վկայում են սուրբ Իգնատիոսի մատենագրական վաստակի մասին, որ նա թղթեր է գրել Փոքր Ասիայի և Հոռոմի եկեղեցիներին. «Գրեաց թուղթ մի առ եկեղեցին եփեսացոց...»,—գրում է Եվսեբիոս Կեսարացին,—միս այլ թուղթ ի Մագնեսիայ քաղաք, այն որ է առ Կողմն Մենիմորեա գետոյ... և այլ միս ևս դարձեալ Տրեդիոս քաղաքի... առ եկեղեցին/հոռովացոց գրեաց և մատոյց անցա հաճութիւնս հաւանութեան զի մի՛ հրաժարեցին անքա ի վկայութենէն անոռա, և զրկեցեն զան յուսոյ անտի գոր սիրեցէ... իսկ իբրև անցին ընդ Զմիտնեայ ի Տուրհաստանէ, գրեաց անցա դարձեալ միսանգամ այնցիկ՝ որ ի Պեղեգդեպիս և առ եկեղեցին Զմիտնացոց, բայց յականէ յանուանէ առ Պողիկարպոս եպիսկոպոս անցա, զի գիտէր եթէ նախանձատր և մմանող է առաքելոց»³⁷:

Ընդհանրական եկեղեցու հայրերից Հերոնիմոսն ու Հովհան Ոսկեբերան հայրապետը և ուրիշներ մույնպես վկայում են, որ Իգնատիոսը հովվական թղթեր է գրել Փոքր Ասիայի մի շարք եկեղեցիներին և Հոռոմի եկեղեցուն:

«Եկեղեցվո գրականության մեջ Անավոր են Իգնատիոսի յոթ թղթերը, որոնք կապրումակեն վարդապետական և հոգեկրթական հարցերու վերաբերմամբ թանկագին տեսություններ»³⁸:

Իգնատիոսը իր հովվական թղթերը

գրել է Զմյուռնիայից, ուր առիթը ունեցավ երկար մնալու դեպի Հոռոմ իր ճանապարհորդության ժամանակ, «ինչ որ ոչ միայն առիթ մը եղավ չարչարված հայրապետին քչիկ մը շունչ առնելու, այլ նաև երջանիկ պատեհության մը որ շրջակա քաղաքներու քրիստոնյաներն ալ այցելեն իրեն և լսեն բացառիկ շնորհներով օժտված եկեղեցիի այս պատկառելի հովիվը: Ինքն ալ օգտվելով այս դադարեն զանազան նամակներ գրեց շրջակա քաղաքներու քրիստոնյաներուն, հորդորելով, որ հպատակ մնան իրենց եպիսկոպոսներուն և զգույշ ըլլան ու չվարակվին այն օրերուն տարածված ինչ-ինչ հեղեղիկոսական գաղափարներեն: Այս նամակները լեցուն են քրիստոնեական սիրո ազնիվ ոգիով, հովվական հոգածությամբ և առաքելական նախանձախնդրությամբ»³⁹:

Իգնատիոսի նամակները սրտագին կոչեր և պատգամներ են ուղված եկեղեցիներին պահպանելու քրիստոնեական հավատքի միությունն ու ուղղափառությունը, առաքելականը եկեղեցական կարգ ու կանոնը, եպիսկոպոսների հեղինակությունն ու եկեղեցական նվիրապետական իշխանության հմայքն ու հեղինակությունը⁴⁰:

Իգնատիոսի նամակները լայն լույս են սփռում նաև քրիստոնեական համայնքների ներքին կյանքի պայմանների վրա, հավատացյալների կրոնական ապրումների և բարեպաշտության վրա, առաքելական դարի քրիստոնեության ուսուցման և սովորությունների վրա, նամակներ, որոնք եկեղեցիների ծոցում առաջ են բերել խորունկ, կրոնական խանդավառություն, հետաքրքրություն ու նվիրում:

Նամակների լեզուն, ոճը ոգեշունչ են, պատկերավոր, գեղծ՝ ավելորդաբանություններից, ոճական հնարաններից ու նրբամտություններից: Իգնատիոսի կրոնական նախանձախնդիր ոգին և քրիստոնեական եռանդը գնում—անցնում են սովորական արտահայտչականության բոլոր սահմանները: Եվ վերջապես նրա նամակները անգնահատելի կարևորություն ունեն եկեղեցու դավանանքի պատմության համար⁴¹:

Ս. Իգնատիոսի նամակներում արտահայտված նրա աստվածաբանական, քրիս-

³⁹ Ծնորդք արքեպիսկոպոս Գալուստյան, մույնը, էջ 85:

⁴⁰ Quasten, մույնը, էջ 64: Տես նաև Encyclopaedia, II հատոր, էջ 108, VI հատոր, էջ 28, 30. XIV հատոր էջ 671: Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, մույնը էջ 65:

⁴¹ Quasten, մույնը, էջ 64:

³⁶ Օրացոյց, մույնը, էջ 145:

³⁷ Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ, մույնը, գլուխ ԼԶ: Տես նաև Մատենադարան..., մույնը, էջ 479:

³⁸ Թորգոմ պատրիարք Գուշակյան, մույնը, էջ 4:

տոտաքանական, ծիսապաշտական վարդապետության լավագույն ուսումնասիրության համար տեսնել Quasten-ը⁴²:

Ս. Իգնատիոսի նամակները մեզ հասել են լատիներեն, ասորերեն և հայերեն թարգմանություններով:

Ս. Իգնատիոսի թղթերը «երեքտասան թղթոցն միանգամայն» հայերենի թարգմանվել են «հառանականաբար յասորականե»⁴³. «մեծագույն մասամբ Ե դարուն»⁴⁴:

«Իգնատիոսի գրեթե բոլոր թղթերը, վավերականներն ու անվավեր նկատվածները, թիվով 13 հատ, թարգմանված են հայերենի Ե դարուն»⁴⁵:

Եկեղեցական հայրերի գրած թղթերը կամ նրանց նամականին «դառնում է եկեղեցական գրականության մի կարևոր տեսակը, որով եկեղեցու հայրերը բարոյական խրատներ ու բացատրություններ էին տալիս ժամանակակից խնդիրների մասին և հարաբերություն պահպանում միմյանց ու համայնքների հետ: Հնումն շատ ծանոթ են եղել Անտիոքի Իգնատիոս Աստվածազգյաց եպիսկոպոսի խրատական թղթերը, ինչպես նաև Ջմյուռնիայի Պողիկարպոս եպիսկոպոսին: Մնում են նրանց թղթերի հին հայերեն թարգմանությունները»⁴⁶:

1783 թվականին Կ. Պոլսում հրատարակվել են Իգնատիոս եպիսկոպոսի 13 թղթերը, հետևյալ վերնագրով.

Թուղթք

սրբոյն Իգնատիոսի աստուածագգեաց
մարտիրոսի Անտիոքայ եպիսկոպոսի

Գիրքը լույս է տեսել «ի վեհապետութեան տեսան Դուկասու սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց և ի պատրիարքութեան սրբոյն Սաղիմայ տեսան Յովակիմայ արքի եպիսկոպոսի, Տպեալ հրամանա տեսան Զաքարիայ ազգասէր պատրիարգի ի Կոստանդնուպոլսոյ

1783, 157 էջ⁴⁷

Գիրքը բացվում է «Բան առ ընթերցողս» ներածական բովանդակալից հառաջաբանով (էջ 2—12), որտեղ սուրբ Իգնատիոսն ու ուղղափառ հայրապետները ներ-

կայացվում են «աստուածաման կեցին յաշխարհի և հաստատեցին զեկեղեցի սուրբ, եղեն լոյս աշխարհի, աղ երկրի, սինք հաւատոյ և հիմունք սրբոյ եկեղեցւոյ...», իսկ Իգնատիոսը «օրհնեալն ի բերանոյ Աստուծոյ, ընկալեալն ի Քրիստոսէ ի գիրկս, իմաստուն վարժապետն և դաստիարակն մանկանց Սիոնի» (էջ 2):

Հստ հրատարակչի վկայության, Իգնատիոսի թղթերը հայերենի են թարգմանված «ի նախնեացն մերոց, ի սրբոյն Սահակայ Պարթևէ և ի մեծէն Մեսրոպայ և յաշակերտաց նոցին» (էջ 5):

Իգնատիոսի թղթերը տպագրության համար պատրաստել է «քարենշան և իմաստասուն, մտահարուստ Մատթեոս դպիրն» (էջ 6):

Իգնատիոսի թղթերի հայերեն թարգմանությունից Կ. Պոլսում միայն «զհինգ օրհնակս հինս և ընտիրս կարացաք գտանել», նշում է հրատարակիչը, որոնք ստուգվել, համեմատվել և տպագրության համար պատրաստվել են, «քայց և զոմանս հոլովս և զխոնարհմունս անուանց և քայից թողաք ըստ հնոցն սովորութեան» (էջ 6):

Այնուհետև հրատարակիչը նշում է, որ Իգնատիոսը ունեցել է նաև 9 այլ թղթեր, որոնք չեն հասել հրատարակիչների ձեռքը:

Նշվում է նաև, որ Իգնատիոսի թղթերի «համայնք բանք, պատուէրքն, յորդորքն, խրատքն, ողջոյնքն և այլք ամենայն յար և նմանք են» (էջ 10) Պողոս առաքյալի թղթերի ոճին ու արտահայտություններին: Գիրքը շարել և սրբագրել է Մինաս եպս. Բագրևանդացին, միաբան «լուսական մտայն սրբոյ էջմիածնի և նուիրակ Կ. Պոլսոյ»:

Այնուհետև տպագրվել են գրքույկում Իգնատիոսի թղթերը «գրեալք ըստ իրաքանչիւր քաղաքաց, յորժամ ելանէր վկայել ի Հոռվմ ի թագաւորութեանն Տրալիանոսի.

Առ Զմիւռնացիս—3 նամակ, էջ 13—25.

Առ Պողիկարպոս եպս. Զմիւռնայ քաղաքի, էջ 25—33.

Առ Տիեհասցիս—6 նամակ, էջ 34—51.

Առ Մաղմիսիացիս—4 նամակ, էջ 52—62.

Առ Տրալիանոսացիս—4 նամակ, էջ 63—73.

Առ Ֆիլատելֆիացիս—4 նամակ, էջ 74—84.

Առ Հոռվմ քաղաք—3 նամակ, էջ 85—95.

Առ Անտիոք քաղաք—9 նամակ, էջ 96—106,

⁴² Կույնը, էջ 65—76:

⁴³ Մատենադարան..., նույնը, էջ 480:

⁴⁴ Թորգոմ պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 4:

⁴⁵ Ընդրեք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 36:

⁴⁶ Ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատոր I, Երևան, 1944, էջ 93, 96:

⁴⁷ Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1805), Երևան, 1963, էջ 174:

Թուղթ Մարիայ կնոջ միոյ ի Կասպալուն քաղաքի, առ Իգնատիոս երանելի գրեալ, էջ 107—112.

Պատասխանի թղթոյն Մարիայ երանելոյն Իգնատիոսի—2 նամակ, էջ 113—118.

Ի Տարսոն քաղաք—3 նամակ, էջ 119—128.

Առ Ուրիոն սարկաւագ—3 նամակ, էջ 129—138.

Առ Փիլիպպա քաղաք 4 նամակ, էջ 139—157:

Գրքի 153-րդ էջում է գտնվում «Յիշատակարան տպեցման սուրբ Գրոցն»: Գրքի տպագրությունը ավարտվել է 1783-ին և «ի թուոջ մերում ՌՄԼԲ (1232+ 551)=1783», Կ. Պոլսում, «ի տպարանի Պետրոսեան Ստեփանոսի, ի յիշատակ ազույցի Պետրոսեան Յոհաննի և Թումանեան Իգնատիոսի, ի Քրիստոս հանգուցեալ»:

Սույն «Յիշատակարան»-ի վերջում խնդրվում է «միոյ հայրմերիս» հիշել Հովհանն Պետրոսյանին, Թումանյան Իգնատիոսին, ապա «զմշակս տպագրարանիս», այսինքն՝ «զարարարդօղս, զցրուօղս կապարէից՝ զՅովհաննէս, զՍտեփաննոս և զՄանուէլ մանկունս, զծրաջան և զհաւատարիմ մելանահար տիրացու Կարապետ պատանիս, զի աղօթիք ձերովք զօրացեալք գոհունակութեամբ և հաւատարմութեամբ ծառայեսցեն ազգաշահ և աստուածահաճոյ արհեստիս տպագրչութեան, Ամէն» (էջ 158—159):

Ս. Իգնատիոսի հայերեւելի թարգմանված աշխատություններից հիշվում են նաև

1. Իգնատիոսի Անտիոքացոյ թուղթը⁴⁸, ինչպես նշեց, և

2. Վկայութիւն Իգնատիոսի (էջ 594):

ՍՈՒՐԲ ՊՈՂԻԿԱՍՐՊՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԶՍՅՈՒՌԻՆԻԱՅԻ (70—158)

Առաքելական հայրեր-ի մեջ երրորդ անձնավորությունը Զմյուռնիա քաղաքի սուրբ Պողիկարպոս եպիսկոպոսն է:

Ինչպես Անտիոքը, նույնպես Զմյուռնիան Երուսաղեմից հետո առաջին դարում հանդիսացան քրիստոնեական կարևորագույն կենտրոններ⁴⁹:

Պողիկարպոսը Հովհաննէս Ավետարանչին է աշակերտել Եփեսոսում: Այդ քա-

ղաքը, որը նշանավոր էր իր Արտեմիս դիցուհի մեծահարուստ տաճարով, նույնպես հանդիսացավ քրիստոնեական կենտրոններից մեկը⁵⁰:

Եփեսոսի և Զմյուռնիայի մեջ առաքելական-քարոզչական բեղուն գործունեություն է ծավալում հեթանոսաց մեծ առաքյալը՝ սուրբ Պողոս: Իսկ Հովհաննէս Ավետարանիչը իր կյանքի վերջին օրերը անցկացնում է Եփեսոսի և Զմյուռնիայի մեջ, ուր և գրում է իր Ավետարանը և ընդհանրական թղթերը:

Զմյուռնիայի եկեղեցին Փոքր Ասիայի յոթ եկեղեցիներից⁵¹ ամենածաղկած ու բարգավաճ եկեղեցին էր համարվում, որի հավատարմությունը, նվիրումն ու արիությունը Քրիստոսին, գովույթան է արժանացել Յայտնութեան գրքում:

Ահա այս նշանավոր քաղաքի եպիսկոպոս էր նշանակվել Հովհաննէս Ավետարանչից Պողիկարպոսը, որը իր եռանդուն ու համարձակ քրիստոնեական քարոզչության համար արդարորեն կոչվել է Վարդապետ Փոքր Ասիայի:

Զմյուռնիայում Պողիկարպոսին է աշակերտում Լիոնի Իրենեոս նշանավոր եպիսկոպոսը, որը հետագայում եղավ առաքյալը Գալիլայի, Հարավային Ֆրանսիայի⁵²:

Պողիկարպոս հունարեն նշանակում է բազմապտուղ: Արդարև նա առաքելական-քարոզչական փառավոր իր գործունեությամբ հանդիսանում է ոչ միայն Փոքր Ասիայի, այլև ողջ քրիստոնեական աշխարհի Բ դարու առաքելական հայրերի մեջ բազմաթիվում հայրապետներից մեկը:

Պողիկարպոսը հավանաբար ծնվել է 70 թվականին և նահատակվել 158 թվականին:

158 թվականին Պողիկարպոսը ևս կարևոր մի ճանապարհորդություն է կատարում դեպի Հռոմ: Այդ թվականին արևելյան և արևմտյան եկեղեցիները հուզող կարևոր հարցը Զատիկը և կամ Քրիստոսի Հարության հիշատակը տոնելու խնդիրն էր: Փոքր Ասիայում, ուր ապրում ու գործում էր Պողիկարպոսը, ի գորու էր Հովհաննէս և Փիլիպոս առաքյալների ավանդությունը, որը հրահանգում էր Զատիկը տոնել հրեական պատեքի հետ, Նիսան ամ-

⁵⁰ Նոր Կտակարան, նույնը, ԺԹ գլուխ 1—40, էջ 875—879, Յայտնութիւն, նույնը, «Թուղթ» Եփեսոսի եկեղեցուն, Բ գլուխ 1—7, էջ 867—868: Բառարան սուրբ Գրոց, նույնը, էջ 198:

⁵¹ Նոր Կտակարան, Յայտնութիւն, նույնը, էջ 867—872:

⁵² Այս մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1979 Նո 2, էջ 23—27:

⁴⁸ Ցուցակ ձեռագրաց..., նույնը, էջ 249:

⁴⁹ Նոր Կտակարան, նույնը, Գործք առաքելոց, գլուխ ԺԱ 19—28, ԺԵ 30—41, էջ 851, 865, «Թուղթ» Զմյուռնիայի եկեղեցուն, Յայտնութիւն, նույնը, էջ 868, Բ գլուխ 8—11: Տես նաև Բառարան սուրբ Գրոց, Կ. Պոլիս, 1881, «Անտիոք», էջ 42—43, «Զմյուռնիա», էջ 201:

սի 14-ին, շաբաթվա որ օրն էլ որ պատահեր այդ ամսաթիվը:

Արևմտյան եկեղեցին Զատիկի հարցում հետևում էր ս. Պետրոսի և ս. Պողոսի ավանդության, ըստ որի խառորեն հրահանգվում էր Զատիկը չտոնել Նիսանի 14-ին, հրեաների հետ, այլ Նիսանի 14-ին հաջորդող կիրակի օրը, ինչպես հաստատում է նաև Եվսեբիոս Կեսարացին⁵³:

«Զատիկը տոնողներուն միջև եղած այս վեճը կրնար աղետալի դառնալ եկեղեցւոյ համար Վիկտոր Պապի (189—199) օրով, որ կապտանար Առաջավոր Ասիայի (այսինքն Փոքր Ասիայի) եպիսկոպոսները գրել էկեղեցւոյ հաղորդակցութեանն: Իրենեոսի միջամտությամբ կփրկվի կացությունը»⁵⁴:

Պողիկարպոս եպիսկոպոսը Հռոմում Անեկտոս Պապի հետ, Զատիկի հարցի շուրջ, տեսակցություններ է ունենում, բայց, դժբախտաբար, արևելյան և արևմտյան եկեղեցիների միջև համաձայնություն չի կայանում: Հռոմի եպիսկոպոսը, սակայն, Իրենեոսի միջնորդությամբ և Պողիկարպոսի թելադրությամբ չի համարձակվում վճռական քայլի դիմել՝ մերժելու արևելյանների տեղական ավանդությունը, որը կոչվում էր «Չորեքտասականների» տեսակետը, այսինքն Զատիկը Նիսանի 14-ին տոնողների տեսակետը: Փոքր Ասիայի եկեղեցիների և Հռոմի եկեղեցու միջև «երկուստեք բարի տրամադրություն կար և քրիստոնեական նույն ոգին դեռ տիրապետող էր, ուստի համաձայնեց, որ յուրաքանչյուր եկեղեցի ընթանա ըստ իր նախկին սովորության»⁵⁵:

Զատական հարցի առիթով Իրենեոսը, Պողիկարպոսը թելադրեցին Հռոմի եպիսկոպոսին «չափավորել իրեն ի սեր խաղաղության... Հռոմի եպիսկոպոսի պահանջը եկեղեցական սովորություններն ու հավատքը մի հրամանագրով Հռոմի սովորությունների և հավատի համաձայն կարգադրելու, միանգամայն մերժվեցավ... Բայց հետագայում Հռոմի եկեղեցու առաքելական ավանդությունը հաղթեց Փոքր Ասիայի առաքելական ավանդությանը...: Նիկիայի ժողովը որոշեց ամբողջ եկեղեցուն, թե՛

Արևելքում և թե՛ Արևմուտքում, միաձուլություն պահպանել այդ տոնի նկատմամբ»⁵⁶:

Հռոմում Պողիկարպոսը իր կրակոտ ճառերով վալենտինյան և մարկիոնյան բազում աղանդավորներ վերադարձրեց ուղղափառ եկեղեցու գիրկը: Նա իր Աթոռը վերադարձավ և ենթարկվեց Մարկոս Ավրելիոս և Լուկիոս Վերոս կայսերի հալածանքներին:

Պողիկարպոսի օրով Փոքր Ասիայում կատարվեց նահատակությունը Փիլատել-ֆիայի 12 քրիստոնյաների, որոնք Զմյուռնիա էին եկել Պողիկարպոսի տեսության: Այդ 12 նահատակները ծանոթ են Արևելյան վկայք անունով: Նրանց հետ նահատակվեց նաև Պողիկարպոսը, որպես տասներեքերորդ մարտիրոսը: Նա անձամբ ներկայացավ իր դահիճներին, խոստովանվեց իր քրիստոնյա լինելը: Նրան առաջարկում էին փրկել իր կյանքը՝ ուրանալով իր Աստվածն ու հավատքը: Դատի ժամանակ նա համարձակությամբ ասաց. «Ահա ՏՅ տարի է, ինչ ես ծառայում եմ Տիրոջը և երբեք որևէ չարիք նա ինձ չի հասցրել, այլ արժանացել եմ բազում բարիքների, ինչպես ես կարող եմ ուրանալ իմ Թագավորս ու իմ Փրկիչը, որը իր արյամբ փրկել է ինձ»:

Պողիկարպոսը «ընդունեց հրկեզ մահվամբ իր վճիռը»⁵⁷: Նրան այրեցին խարույկի վրա: Վարքը պատմում է, որ նա անվնաս մնաց լավիլիզող հրդեհի կրակների մեջ, ձեռքերը բարձրացրած աղոթում էր, մինչ «բոցը բարձրանում էր նալի առագաստի մեման, որը կարծես ոռչում էր քսմուց և կամար շինում նրա վրա: Սուրբը գտնվում էր մի վրանի ներքո: Այդ վիճակում էլ նրա վերքերից հոսող արյունը հանգցնում է հրդեհի բոցերը, և նա ավանդում է հոգին»: Դահիճները երբ տեսան, որ Պողիկարպոսի մարմինը անվնաս է մնացել, սրով խոցեցին նրա մարմինը և դարձյալ կրակը արժարժելով այրեցին նրա անշունչ մարմինը 158 թվականի փետրվարին:

Հայ եկեղեցին Պողիկարպոսի հիշատակը կատարում է Հիսնակաց Գ. կիրակիի հաջորդ երեքշաբթի օրը⁵⁸:

Ս. Պողիկարպոսը զբաղվում էր ավելի քարոզչական-հովվական գործունեությամբ,

⁵³ Եվսեբիոս Կեսարացի, Պատմություն եկեղեցւոյ, նույնը, Թ. ԻԿ, էջ 394—402:

⁵⁴ Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյան, Զատիկի հարցը, Բելյուր, 1971, էջ 9—19: Տես նաև նույն հարցի մասին «Էջմիածին» ամսագիր, 1979, № 2, էջ 25—29:

⁵⁵ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 37:

⁵⁶ Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 96:

⁵⁷ Թորգոմ պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 96, Quasten, նույնը, էջ 77—78: Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 37:

⁵⁸ Օրացոյց, նույնը, էջ 144:

քան ս. գրական-մատենագրական վաստակով:

Պողիկարպոսը չորս թուղթ է գրել Փոքր Ասիայի եկեղեցիներին և եպիսկոպոսներին հասցեագրված, որոնցից մեզ հասել է առ փիլիպպեցիս ուղղված հովվական թուղթը, լատիներեն թարգմանությամբ: Առ փիլիպպեցիս թուղթը բաղկանում է երկու մասից և հովվական-խրատական բնույթ ունի, ինչպիսիք են Կղեմեսի և Իգնատիոսի թղթերը:

Պողիկարպոսը սույն թուղթը գրելիս աչքի առաջ է ունեցել Կղեմեսի առ կորընթացիս թուղթը, որի մեջ Պողիկարպոսը նաև հանգամանորեն ներկայացնում է իր ժամանակի եկեղեցու պատմությունը, ուղղափառ, վարդապետությունը, ի քրիստոնեական բարեպաշտությունն ու մարդասիրությունը, եկեղեցական կազմակերպությունը՝ գլխավորությամբ համայնքի եպիսկոպոսի:

Թղթի առաջին մասը բաղկանում է 13 գլուխներից և գրված է 110 թվականին: Երկրորդ մասը բաղկանում է 12 գլուխներից և գրված է 20 տարի հետո, 130 թվականին, առաջին թղթի գրությունից:

Ս. Պողիկարպոսի աստվածաբանական-քրիստոնաբանական ուսմունքի մասին տես նաև Quasten-ի բովանդակալից ուսումնասիրությունը⁵⁰:

⁵⁰ Quasten, Նույնը, էջ 37—38, տես նաև Encyclopedia:

Առ փիլիպպեցիս թուղթը հայերենի չի թարգմանվել:

Պողիկարպոսի նահատակությունից հետո Զմյուռնիայի եկեղեցին կարևոր և բովանդակալից մի նամակով նկարագրում էր նրա նահատակության մանրամասն պատմությունը, Փոքր Ասիայի եկեղեցիներին ուղղած պաշտոնական մի գրությամբ: Այդ նամակը համարվում է քրիստոնեական մարտիրոսագրության առաջին և գրավոր վավերագիրը⁶⁰:

Պողիկարպոսը իր նահատակության առաջին իսկ տարուց արժանացել է տարեկան հիշատակության: Այս իրողությունից է սկիզբ առնում եկեղեցու մարտիրոսների հիշատակը հարգելու սովորությունը, նրանց նահատակության օրվանից⁶¹: Նահատակության պահին Պողիկարպոսը արտասանել է Ամենասուրբ Երրորդության ուղղյալ գոհաբանական և փառաբանության սքանչելի մի աղոթք, որը համարվում է ընտիր մի նմուշը հնագույն քրիստոնեական աղոթքի⁶²:

americana, I հատոր էջ 858, II հատոր էջ 108, XXII հատոր էջ 527: Շնորհք արքեպ. Գալուստյան, նույնը, էջ 37—38:

⁶⁰ Quasten, Նույնը, էջ 78:

⁶¹ Նույնը, էջ 78:

⁶² Նույնը էջ 78:

